«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան
N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԽՄԲԱԿ

Հայոց ցեղասպանություն

8–րդ դասարան

Շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ

Բացատրագիր

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐՑ Է ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ԱՅԴ ՊԱՆԱԿԻ ՄԵՋ ՊԵՏՔ Է ԴԻՏԵԼ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ:

Արժևորելով ՀՀ հանրակարթական դպրոցներում հայոց պատմության ուսումնասիրությունը, մեզ ազգային հիմնախնդիրների հետ սովորողների ծանոթացումը, պետք է ամրագրել, որ պատմական ժառանգությունը, փորձն ու դասերը հսկայական արժեք են ներկայացնում: Դրանք ծառայում են սովորողների բարոյական և մշակութային զարգացմանը, հասարակության մեջ իրենց տեղը գտնելուն, իրենց պատմական արմատները և պատմական հիշողությունը ձևավարելուն:

Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարը հայ ժողովրդի ազատագրական պայքարի շարունակությունն է մեր օրերում՝ հանուն իր պատմական հայրենիքում ազգային պետականության վերականգման, հանուն ազատ և անկախ ստեղծագործ կյանքի:

Կարևոր է, որ հանրակրթական դպրոցների սովորողները՝ ՀՀ ապագա քաղաքացիները, ձեռք բերեն նաև որոշ կարողություններ թուրքական պետության ժխտողականության և կեղծարարության քաղաքականությանը հակադարձելու համար:

«Հայոց ցեղասպանություն» խմբակի ծրագիրը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Բացատրագիր
2. Նպատակներ
3. Խնդիրներ
4. Ակնկալվող վերջնարդյունքներ
5. Բովանդակություն
6. Մեթոդաբանություն

Նպատակներ

- ✓ Սովորողներին ամբողջական և համակարգված գիտելիքների հաղորդել Հայոց ցեղասպանության՝ որպես Հայաստանի ազգային խնդիրներից մեկի/ պատճառներ, իրականացում, հետևանքների հաղթահարում, պատմական դասեր/ մասին
- ✓ Նպաստել գիտելիքների ձեռքբերմանը, վերլուծելու, մեկնաբանելու հայ ժողովրդի և մասնավորապես արևմտահայության թույլ տված հիմնական սխալները, որոնց հետևանքով իրականացավ Հայոց Մեծ եղեռնը
- ✓ Աճող սերնդին ոչ միայն հաղորդել Հայոց ցեղասպանության մասին ամբողջական գիտելիքներ, այլև ձևավորել ազգային ու համամարդկային հիմնախնդիրների լուծման համար պայքարելու վճռականություն
- ✓ Պարզաբանել սովորողներին, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է
- ✓ Պատմության դասերի հիման վրա աճող սերնդին դաստիարակել մարդու և ժողովուրդների բնական ու պատմական իրավունքները հարգելու, ցեղասպանության երևույթն անվերապահորեն դատապարտելու, հայրենասիրության և մարդասիրության ոգով:
- ✓ Նպաստել սովորողների կողմից գիտելիքների ձեռքբերմանը եղեռնազարկ, հայրենազրկված ժողովրդին հասցված վնասների փոխհատուցման, Արևմտյան Հայաստանում պահպանված հայ մշակույթային ժառանգության ոչնչացման վերաբերյալ վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:

Խնդիրներներ

- ✓ Նպաստել ազգային հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը
- ✓ Խորացնել Հայոց ցեղասպանության վերաբերյալ սովորողների պատկերացումներն ու գիտելիքներն
- ✓ Օգնել գոյության ունեցող բացասական կարծրատիպերի հաղթահարմանը
- ✓ Հայաստանում և Սփյուռքում ձևավորել Մեծ եղեռնի վերաբերյալ ընդհանրական պատկերացում և պայքարի միասնական մոտեցում

- ✓ Դաստիարակել ավելի բանիմաց , լայնախոհ, պետության հանդեպ պատասխանատու քաղաքացիներ
- ✓ Ձևավորել պատմական արդարության վերականգման, հայ ժողովրդի ՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարելու գիտակցություն
- ✓ Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու , վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու կարողություններ
- ✓ Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը՝ վերհանելու ցեղասպանությունների նմանություններն ու տարբերությունները:

Ակնկալվող վերջնարդյունքներ

- ✓ Նոր գիտելիքների ստանալու և թուրքական պետության ժխտողականության ու կեղծարարության քաղաքականոությանը հակադարձելու կարողությունների ապահովումը
- ✓ Հայոց ցեղասպանության թեմայի ճշգրիտ ընկալման, նրա տեղի ու դերի գնահատման և արժևորման որակի բարձրացումը
- ✓ Գոյություն ունեցող բարդույթների հաղթահարումը
- ✓ Հայոց ցեղասպանության վեաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելը
- ✓ Հայոց անկախ պետականության՝ որպես հայության ազգային իրավունքների պաշտպանության երաշխիքի գիտակցության ամրապնդումը
- ✓ Հայության տարբեր հատվածների միասնության խորացումը:

Բովանդակություն

	Թեմայի բովանդակություն	Ժամ
1	Ցեղասպանություն եզրույթի մասին	2
2	Ցեղասպանության արձագանքը հայ գրականության մեջ 1. Ավետիս Ահարոնյան «Աքաղաղ» պատմվածքի ընթերցում, վերլուծություն: 2. Ակսել Բակունց «Լառ Մարգար», «Ծիրանի փող» պատմվածքներ:	5

	3. Պարույր Սևակ «Անլռելի զանգակատուն» պոեմից հատվածներ. հարցադրումներ, պատասխաններ, վերաբերմուն, գնահատում: 4. Մուշեղ Գալշոյան «Մամրե արքան» պատմվածքի վերլուծություն: 5. Գրել էսսե:	
3	Թեմայի ուսուցումը գեղարվեստական ֆիլմերի միջոցով: Անրի Վերնոյ«Մայրիկ» պատմա–կենսագրական ֆիլմ . ընտանիքի օրինակով Հայոց ցեղասպանության և հետևանքների մասին: Դիտում հատվածաբար, ընտրովի՝ հընթացս հարցադրումներ, վերլուծություն, վերաբերմունքի արտահայտում: Ֆիլմի դիտումը եզրափակել՝ գրելով էսսե:	5
4	Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմի դիտում. հատվածաբար, ընտրովի՝ հընթացս հարցադրումներ, վերլուծություն, վերաբերմունքի արտահայտում: Վերլուծելով Ա. Էգոյանի «Անցյալը շարունակ հետապնդում է մեզ, նույնիսկ եթե մենք չենք ուզում հիշել դրա մասին» միտքը՝ եզրահանգել, որ մերթ միմյանց հետ բախվելով, մերթ միահյուսվելով ապրում են երկու ժամանակներ՝ 1915–ի ցեղասպանությունը և մեր օրերի կյանքը. երեք սերունդների հայեր, որոնց մեջ անընդհատ խոսում է հիշողությունը: Ֆիլմի դիտումը եզրափակել՝ գրելով էսսե:	5
5	Ցեղասպանությունը շարունակվում է. Ձուլում, մշակութային ցեղասպանություն: Ինչու՞ են հայկական տեղանունները փոխում Թուրքիայում: Արցախի և Նախիջևանի մշակութային կոթողների ոչնչացումը, վերափոխումը:	3
6	Հայ ժողովրդի կորուստներն ու պահանջատիրությունը	3
7	Հայկական լեռնաշխարհը /աշխատանք պատմական քարտեզով, պայմանական նշաններով. հետհիշողություն, ներկան իբրև անցյալի արտացոլանք/	3
8	Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորցրած տարածքները /աշխատանք քարտեզով, բանալի դեպի ինքնություն և անցյալը որպես ցեղասպանության զոհերի ժառանգություն/	3
9	Արևմտահայերի թվաքանակի խնդիրը: Հայ ժողովրդի տված մարդկային կորուստները ցեղասպանության տարիներին:	2

10	Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի ունեցած նյութական կորուստները:	2
11	Հայկական պատմական հուշարձանները Կոստանդնուպոլիսում;	1
12	1. Հետահայացք հայկական հարցի ծագմանը և էությանը 2. Հայկական հարցի էությունը, ծագումն ու առնչությունը Արևելյան հարցի հետ:	2
13	Հայկական հարցի լուծման ճանապարհին առաջին քայլերը:	2
14	Արցախի և Սյունիքի կարճատև անկախությունը:	1
15	1. Արևելահայ և արևմտահայ հատվածները Օսմանյան և ռուսական կայսրությունների գերիշխանության ներքո: 2. Օսմանյան կայսրության քաղաքականության էությունը և հայկական հարցը	2
16	Ռուսաստանը, Կովկաս մուտք գործելով, Արևելահայ կյանքի տնօրինողն է դառնում	2
17	Հայկական հարցը միջազգային պայմանագրերում	2
18	Հայկական հարցը և մեծ տերությունների քաղաքականությունը Օսմանյան կայսրության նկատմամբ	2
19	Բեռլինի վեհաժողովի արդյունքները որպես հայոց քաղաքական կյանքի խթան	2
20	Զուլումը Արևմտյան Հայաստանում. Հայկական հարցի լուծման Համիդյան քաղաքականությունը	2
21	Պայքարի ալիքը ընդդեմ համիդյան քաղաքականության	2
22	Երտթուրքական հեղաշրջման մթնոլորտում:	1
23	Դեպի 1–ին համաշխարհային պատերազմի այրող քուրաները; Թուրքիան մասնակցում է պատերազմին՝ իր «Մեծ երազին» հետամուտ:	2
24	Հայոց ցեղասպանության ընթացքը	2
25	Պետությունները և պետական արխիվները հայկական կոտորածների մասին;	2
26	Ինքնապաշտպանական կռիվները	2
27	Ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու դատաստանը՝ Նեմեսիս	2
28	Ցեղասպանության ուրացում և պատմության խեղաթյուրում	2

29	Ճանաչողական էքսկուրսիա «Ծիծեռնակաբերդ» հուշահամալիր, Ցեղասպանության թանգարան–ինստիտուտ	1
30	Ճանաչողական էքսկուրսիա «Մուսա լեռ» թանգարան:	1

Մեթոդաբանություն

- ✓ Դասընթացը ավարտելուց, ճանաչողական էքսկուրսիաների տպավորությունները հավաքելուց հետո կգրեն էսսե «Ի՞նչ պատահեց, ի՞նչպես պատահեց, ինչու՞ պատահեց» վերնագրով:
- ✓ Թեմաների բովանդակությունը սովորողներին կփոխանցենք հնարավորինս հավասարակշռված, տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առանց վտանգելու երեխաների մեջ ձևավորվող առողջ հոգին: Այդ նպատակով
- ✓ Զգուշանալ սովորողների մեջ ստորադասության բարդույթ առաջացնելուց. խուսափել այն գաղափարից թե «փոքր ու խեղճ ազգ ենք» մեզ վրա տիրեցին, ու երբ մենք փորձեցինք մեր իրավունքները պաշտպանել՝ կոտորեցին:
- ✓ Ցեղասպանությունը կատարվել է թուրքի ձեռքով, բայց առողջ չէ երեխայի մեջ մի ամբողջ ժողովրդի հանդեպ ատելության կամ վախ ներշնչել:
- ✓ Որքան էլ, որ խոսելու լինենք մեր անմեղ զոհերի մասին, պետք է կարողանանք խուսափել զոհի հոգեբանությունից և այդ անառողջ հոգեբանությունը երեխայի մեջ սերմանելուց:
- ✓ Մատուցումը պետք է կատարվի սառը, տրամաբանորեն, կուռ, հակիրճ ոճով ու անաչառ, առանց զգայական ածականների ու որակավորումների:
- ✓ Ինքնապաշտպանական կռիվների մասին խոսելիս կկենտրոնանանք այդ կռիվների արդյունքի վրա և կքննենք դրանց հոգեբանական ազդեցությունը այսօր: Դասավանդումը կարող է ձանձրալի լինել, եթե կենտրոնանանք իրադարձությունների պարզ արդյունքների վրա՝ անվերջանալի անուններով ու թվականներով:Աշակերտը պետք է մասնակից դառնա դասավանդմանը, քաջալերվի նրա հարցադրումները, դեպքերի ու դեմքերի նրա վերլուծումները:
- ✓ Հարցումների և վարժությունների միջոցով կզարգացնենք աշակերտի քննական միտքը, վերլուծելու և տրամաբանելու կարողությունը:

Հարցումները պետք է մղեն աշակերտին մտածելու՝ եթե այսօր տեղի ունենար այս դեպքը, ի՞նչ դիրք կբռներ դրա նկատմամբ:

- ✓ Անցյալի դեպքերն ու երևույթները կկամրջենք ներկայի հետ, անցյալը դարձնել այսօրվա իրականության մեջ շարունակվող ազդակ և որոշիչ տարր՝ ներկայի ու ապագայի զարգացումների ոլորտում: Ուրեմն ՝ պատմական դեպքը քննարկելիս, աշակերտին մղում ենք այն քննարկելու ոչ թե արպես մեռած անցյալ ,այլ մեկ մասը իր առօրյայի, այլ խոսքով, աշակերտին մղել ինքն իրեն դերակատար տեսնելու տվյալ իրադարձության մեջ և ըստ այնմ դատելու, որոշում կայացնելու կամ եզրակացության հանգելու:
- ✓ Դեպքի, դեմքի ու երևույթի մասին պատմական գիտելիքները փոխանցել շարունակության ու փոփոխության ընմռնումներով, ընդգծել պատճառ–հետևանք հարաբերությունները:
- ✓ Պատմական դեպքը, փաստը կամ երևույթը օժտել վայրի ու ժամանակի լայն հասկացողությամբ, որ ենթադրում է աշխարհագրության փոխհարաբերությունը ընկերային, քաղաքական ու մշակութային կյանքի հետ: